Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
դեկտեմբերի 30-ի N 873-Ա
որոշման

«Կորոնավիրուսային համավարակին արձագանք Հայաստանում-2»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Նպաստել կորոնավիրուսային համավարակին արձագանքելու ջանքերին՝ օժանդակելով բռնկման հետևանքով տուժած թիրախային խմբերին, բարելավել արտակարգ իրավիճակներում արձագանքելու մարզային կարողությունները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիա
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Երևան և ՀՀ մարզեր, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	200,000,000 դրամ (349,000 շվեյցարական ֆրանկ)
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ ազգաբնակչություն, այդ թվում՝ միայնակ կենսաթոշակառուներ և հաշմանդամություն ունեցող անձինք, սոցիալապես անապահով բնակչություն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	15.01.2021 – 31.03.2021
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ ուղղություններով՝ 1. Տնտեսական և սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում սոցիալապես անապահով միայնակ տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև սոցիալապես անապահով բնակչությանը՝ կոմունալ վճարների, էլեկտրաէներգիա վարձի փոխհատուցման և սոցիալ-հոգեբանական կենտրոնի կողմից տրամադվող ծառայությունների միջոցով՝ ներառյալ դժվար հասանելի և սահմանամերձ համայքներում

		ծառայությունների տրամադրում՝ ձեռքբերվող ավտոմեքենաների միջոցով /բյուջե 100,500,000 դրամ, ժամանակահատված՝ 15.01.2021 – 31.03.2021/: 2. Աջակցություն Տավուշի մարզում աղետներին դիմակայելու կենտրոնի ստեղծմանը /բյուջե 62,000,000 դրամ, ժամանակահատված՝ 15.01.2021 – 31.03.2021./: 3. Աջակցություն Ստեփանավանի ՀԿԽԸ ճգնաժամային կառավարման կենտրոնին /բյուջե 2,000,000 դրամ, ժամանակահատված՝ 15.01.2021 – 31.03.2021./: 4. Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 35,500,000 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, և գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքների, կոմունալ և գրասենյակային սպասարկման ծառայությունների, ՀԿԽԸ անձնակազմի և կամավորների համար պաշտպանիչ միջոցների ձեռքբերում, տրանսպորտային միջոցների ձեռքբերում և մեքենաների սպասարկման ծախսեր:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝ 1. Բեռնատար մեքենաների վարձակալության և բեռնափոխադրման ծառայությունների ձեռքբերում՝ 575,000 դրամ արժողությամբ 2. Բենզինի ձեռքբերում ՀԿԽԸ մեքենաների համար՝ 599,940 դրամ արժողությամբ: 3. ՀԿԽԸ մեքենաների սպասարկման ծառայությունների ձեռքբերում՝ 220,060 դրամ արժողությամբ: 4. 2 տրանսպորտային միջոցի ձեռքբերում՝ ընդհանուր 17,500,000 դրամ արժողությամբ: 5. Տավուշի մարզում աղետներին դիմակայելու կենտրոնի ստեղծման նպատակով՝ նախագծանախահաշ-վային և վերանորոգման ծառայությունների ձեռքբերում ՝ 62,000,000 դրամ արժողությամբ: 6. Ստեփանավանի ՀԿԽԸ ճգնաժամային կառավարման կենտրոնի համար սարքավորումների ձեռքբերում՝ 2,000,000 դրամ արժողությամբ: 7. Կամավորների համար լոգոներով արտահագուստի ձեռքբերում՝ 700,000 դրամ արժողությամբ: 8. Գրենական պիտույքների, կոմունալ և գրասենյակային սպասարկման ծառայությունների ձեռքբերում՝ 200,000 դրամ արժողությամբ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 35,500,000 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքների, կոմունալ և գրասենյակային սպասարկման ծառայությունների ձեռքբերում, տրանսպորտային միջոցների ձեռքբերում և մեքենաների սպասարկման ծախսեր:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը իրականացվելու է ՀՀ մարզերում և Երևան քաղաքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել հաշվետվություններ Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիային, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության անմիջական վերահսկում: Նաև ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ